ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2016 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ «ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/18-17/01»

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարության աշխատակազմը, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հր., Կառավարական թիվ 1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/18-17/01 ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումները:

Հարցադրում 1:

Խնդրում ենք պարզաբանել, արդյոք մասնակցի որակավորման չափանիշները գնահատելիս (մասնավորապես, մասնագիտական փորձառություն չափանիշը հիմնավորելու համար ներկայացվող նմանատիպ պայմանագրերով մատուցված ծառայությունների գումարային ծավալը հաշվարկելու համար հիմք ընդունվող գումարը (գնային առաջարկի 50%), և առնվազն մեկ պայմանագրով մատուցված ծառայությունների գումարային ծավալը (գնային առաջարկի 20%), հիմք է ընդունվելու 36-ամսյա ժամանակահատվածի համար մասնակցի ներկայացված գնային առաջարկը:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 11.11.2016թ.

Պարզաբանում:

Մասնակցի <<մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը գնահատելիս՝ նախկինում կատարված պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ համեմատվելու է (հաշվարկվելու է) մասնակցի 36 ամսվա համար ներկայացրած գնային առաջարկի հետ:

Հարցադրում 2:

Մրցույթի հրավերով սահմանված է, որ մասնակցի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի ներկայացված գնային առաջարկից: Խնդրում եմ պարզաբանել այս չափանիշի մասով համապատասխանությունը գնահատելիս արդյոք հիմք է ընդունվում մասնակցի ներկայացված գնային առաջարկը առանց ԱԱՀ /ավելացված արժեքի հարկ/, քանի որ համախառն եկամտի հանրագումարը չի ներառում ԱԱՀ:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 11.11.2016թ.

Պարզաբանում:

Մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը գնահատելիս՝ հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը համեմատվելու է ներկայացված գնային առաջարկի հետ, ներառյալ ԱԱՀ-ն, եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ:

Հարցադրում 3:

Խնդրում ենք պարզաբանել, արդյոք 1421 ուսումնական հաստատությունների կապը ապահովող ցանցային սարքավորումների անսարքության առաջացման դեպքում կապի նոր սարքավորումը տրադրվելու է Պատվիրատուի կողմից, և արդյոք ուսումնական հաստատությունների անսարք դարձած կամ խափանված սարքավորումների փոխարինումը և կարգաբերումը իրականացնելը Կատարողի պարտականությունն է սույն գնման գործընթացի շրջանակներում:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 11.11.2016թ.

Պարզաբանում:

Անհրաժեշտ սարքավորումները տրամադրում, տեղադրում, կարգաբերում և սպասարկում է կատարողը: Անհրաժեշտության դեպքում կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից կտրամադրվեն որոշ սարքավորումներ, որոնց ցանկը ներկայացված է սույն ընթացակարգի հրավերի 6-րդ հավելվածում:

Հարցադրում 4:

Խնդրում ենք պարզաբանել, արդյոք ծառայությունները կհամարվեն պատշաճ կերպով մատուցված, եթե Կատարողը ապահովի սահմանված թողունակությամբ կապի առկայությունը մինչև ուսումնական հաստատության երթուղիչ (որը լրացուցիչ պետք է գնվի և հանձնվի Պատվիրատուին որպես սեփականություն): Այսինքն՝ ուսումնական հաստատության կողմից կապը չստանալը ուսումնական հաստատության ցանցային սարքավորումների անսարքության, լոկալ ցանցի խնդիրների, համակարգիչների

ծրագրային և սարքային ապահովման և այլ խնդիրների հետևանքով, չի համարվելու տվյալ կետի համար կապի խափանում /բացակայություն/:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 11.11.2016թ.

Պարզաբանում:

Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնելու է պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը: Ծառայությունը համարվելու է պատշաճ կերպով մատուցված, եթե առկա կլինի պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Ծառայությունների տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը սահմանված են սույն գնման ընթացակարգի հրավերի 6-րդ հավելվածով, որից պարզ է դառնում, որ կատարողը պատասխանատվություն չի կրում ուսումնական հաստատությունների ներքին ցանցի հետ կապված խնդիրների պատճառով կապի բացակայության համար:

Հարցադրում 5:

Խնդրում ենք պարզաբանել արդյոք ուսումնական հաստատություններին տրամադրվող ինտերնետ կապը ենթակա է սահմանափանումների, օրինակ արդյոք պետք է ապահովվի մեծահասակների համար նախատեսված կամ արգելված կայքերի արգելափակում:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 11.11.2016թ.

Պարզաբանում:

Սույն ընթացակարգի հրավերի 6-րդ հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրերում չկա նման պահանջ, հետևաբար՝ կատարողից լրացուցիչ այլ ծառայություններ չի կարող պահանջվել:

Հարցադրում 6:

Խնդրում ենք տալ պարզաբանում Հավելված 1-ի 3-րդ կետում նշված խափանումների և կապի բացակայության և հետագայում կնքվող պայմանագրի տուժանքի համաձայնագրում նշված կիրառվող տույժերի հետ կապված: Արդյո՞ք կապի խափանում է համարվելու միայն հիմնական կապուղու կապի բացակայությունը, թե հիմնական և պահուստային կապուղիների բացակայությունը միաժամանակ:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 11.11.2016թ.

Պարզաբանում:

Պահուստային կապը նախատեսված է հիմնական կապի բացակայության դեպքում, ուստի՝ միաժամանակ 2 կապի միջոցների բացակայության դեպքում կկիրառվի միաժամանակ 2-ի մասով:

Հարցադրում 7:

Արդյո՞ք բոլոր (կամ նույն տարածքում գտնվող) դպրոցների համար կարելի է կիրառել նույն VLAN-ը, թէ՞ ամեն դպրոց ունենալու է առանձին VLAN:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 11.11.2016թ.

Պարզաբանում:

«VLAN»-ները պետք է բաժանել ըստ մարզերի և պետք է ընդգրկի առավելագույնը 80 դպրոց: Այս մասով հավելյալ կարգաբերումները և փոփոխությունները կարվեն ֆիզիկապես միացումները կատարելու պահին կամ ավարտից հետո:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Հայկ Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-51-59-89

Էլ. փոստ՝ gnumner@gov.am

Պատվիրատու՝ ՀՀ կառավարության աշխատակազմ